

ՈՐՈՇՈՒՄ N 1/1076L

28/09/2011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ՀԵՏ
ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՍԻ ԲԻ ԷՅ ՆԵԹ ՄԻՋՔԱՆԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հետ կնքվող գործարքների ՍԻ ԲԻ ԷՅ ՆԵԹ միջբանկային համակարգչային ցանցի միջոցով հայտերի ներկայացման և ընդունման մասին» կարգը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2004 թվականի սեպտեմբերի 17-ի ՀՀ ԿԲ կողմից ՀՀ տարածքում գործող բանկերի հետ կնքվող գործարքների CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով հայտերի ներկայացման և ընդունման վերաբերյալ թիվ 1/549L որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հետ կնքվող գործարքների CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով հայտերի ներկայացման և ընդունման մասին» կարգը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝**

Արթուր Զավադյան

ԿԱՐԳ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԲԱՆԿԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՍԻ ԲԻ ԷՅ ՆԵԹ ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

1. «Հայաստանի հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի հետ կնքվող գործարքների ՍԻ ԲԻ ԷՅ ՆԵԹ միջբանկային համակարգչային ցանցի միջոցով հայտերի ներկայացման և ընդունման մասին» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի (այսուհետև՝ Բանկ) հետ կնքվող գործարքների «ՍԻ ԲԻ Էյ Նեթ» միջբանկային համակարգչային (այսուհետև՝ «ՍԻ ԲԻ Էյ Նեթ») ցանցի միջոցով հայտերի ներկայացման և դրանց՝ Կենտրոնական բանկի կողմից ընդունման կանոնները:
2. Հայտերի ընդունման համար «ՍԻ ԲԻ Էյ Նեթ» ցանցի Կենտրոնական բանկի Lotus Domino սերվերի վրա նախատեսված են առանձին փոստարկղեր՝
 - 1) “CB Lombard Box” անվանումով (CB Lombard Box/CBANet)՝ Լոնբարդային ռեպո գործարքների կնքմանն ուղղված հայտերի համար,
 - 2) “CB Deposit Box” անվանումով (CB Deposit Box/CBANet)՝ դրամական միջոցների ներգրավման գործարքների կնքմանն ուղղված հայտերի համար,
 - 3) “CB Securities Box” անվանումով (CB Securities Box/CBANet)՝ արժեթղթերի առուվաճառքի գործարքների կնքմանն ուղղված հայտերի համար,
 - 4) “CB Repo Box” անվանումով (CB Repo Box/CBANet)՝ ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքմանն ուղղված հայտերի համար,
 - 5) “CB FXauction Box” անվանումով (CB FXauction Box/CBANet)՝ աճուրդի միջոցով արտարժույթի առքի կամ վաճառքի գործարքների կնքմանն ուղղված հայտերի համար,
 - 6) “CB Swap Box” անվանումով (CB Swap Box/CBANet)՝ արժույթային սվոփ գործարքների կնքմանն ուղղված հայտերի համար,
 - 7) “CB Forex Box” անվանումով (CB Forex Box/CBANet)՝ երկկողմանի արժույթային գործարքների կնքմանն ուղղված հայտերի համար,

8) “CB DPauction Box” անվանումով (CB DPauction Box/CBANet) դրամական միջոցների ներգրավման սակարկությունների միջոցով գործարքների կնքմանն ուղղված հայտերի համար:

3. Հայտերը, ինչպես նաև դրանց հետ կապված հաղորդագրությունները Կենտրոնական բանկի կողմից ընդունվում են միայն սույն Կարգի 2-րդ կետով նախատեսված փոստարկերի միջոցով: Այլ փոստարկերին ստացված հայտերը չեն ընդունվում և համարվում են անվավեր:

4. Սույն Կարգի 2-րդ կետով նախատեսված փոստարկերից օգտվելու իրավասությունները սահմանվում են Կենտրոնական բանկի ֆինանսական վարչության (այսուհետ՝ Ֆինանսական վարչություն) պետի կողմից:

5. Սույն Կարգի 2-րդ կետի 3-6-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված փոստարկեր մուտքի իրավասություն ունեցող User.id ֆայլերը գրանցվում են բազմակի (multiple) գաղտնագրով՝ առնվազն երկու գաղտնագրերի մուտքագրումով, ընդ որում՝ փոստարկերը պետք է բացվեն Կենտրոնական բանկի կողմից տվյալ գործարքի կնքման համար սահմանված կամ հայտերի ընդունման հայտարարված վերջնաժամկետի ավարտից հետո:

6. «Սի Բի Էյ Նեթ» ցանցի միջոցով ուղարկվող հայտերն ընդունվում են Կենտրոնական բանկի կողմից տվյալ գործարքների կնքման համար սահմանված և/կամ հայտարարված ժամանակահատվածում և պետք է համապատասխանեն Կենտրոնական բանկի և Բանկերի միջև կնքված համաձայնագրերի և պայմանագրերի դրույթներին:

7. Բանկը հայտերը, ինչպես նաև դրանց հետ կապված հաղորդագրությունները ներկայացնում է միայն «Սի Բի Էյ Նեթ» ցանցի Lotus Domino սերվերներում գրանցված տվյալ գործարքների կնքման համար իրավասու էլեկտրոնային հասցեներից, որոնք նախապես գրավոր ներկայացվում են Կենտրոնական բանկ:

8. Հայտերը, ինչպես նաև դրանց հետ կապված հաղորդագրությունները Կենտրոնական բանկի կողմից ընդունվում են միայն սույն կարգի 7-րդ կետով նախատեսված իրավասու էլեկտրոնային հասցեներից: Այլ էլեկտրոնային հասցեներից ստացված հայտերը չեն ընդունվում և համարվում են անվավեր:

9. Իրավասու էլեկտրոնային հասցեների փոփոխման կամ փակման դեպքում Բանկը գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին փոփոխության վերաբերյալ:

10. Յուրաքանչյուր հայտ (հաղորդագրություն) պետք է պարտադիր օժտված լինի՝ հաղորդագրության առաքումը (Delivery option/Confirm delivery) և ստացումը (Return receipt) հաստատող անդորրագրերը (delivered/received) ստանալու հնարավորությամբ, պաշտպանված լինի էլեկտրոնային ստորագրությամբ (Delivery option/sign) և ծածկագրումով (Delivery option/Encrypt):

11. Հայտերը, ինչպես նաև դրանց հետ կապված հաղորդագրությունները Կենտրոնական բանկի կողմից ընդունվում են միայն սույն կարգի 10-րդ կետով նախատեսված էլեկտրոնային ստորագրության և ծածկագրման առկայության

դեպքում: Առանց էլեկտրոնային ստորագրության և ծածկագրման ստացված հայտերը համարվում են անվավեր:

12. Այն դեպքում, երբ «Սի Բի Էյ Նեթ» ցանցի միջոցով հայտի ուղարկումն անհնար է կամ ուղարկված հաղորդագրությունների դիմաց չեն ստացվել առաքումը հաստատող անդորրագրեր (delivered)՝ Բանկը ձեռնարկում է հետևյալ հաջորդականությամբ գործողություններ՝

1) տեղյակ է պահում Կենտրոնական բանկի «Սի Բի Էյ Նեթ» ցանցի ադմինիստրատորին հաղորդագրությունը ուղարկելու անհնարինության մասին,

2) Կենտրոնական բանկի «Սի Բի Էյ Նեթ» ցանցի ադմինիստրատորը գրանցում է ահազանգը հատուկ մատյանում և միջոցներ է ձեռնարկում խափանումը վերացնելու ուղղությամբ: Խափանումը մինչև Կենտրոնական բանկի կողմից հայտի ընդունման վերջնաժամկետը վերացնելու դեպքում ադմինիստրատորը տեղյակ է պահում այդ մասին Բանկին,

3) եթե նշված խափանումը չի վերացվում, Կենտրոնական բանկի «Սի Բի Էյ Նեթ» ցանցի ադմինիստրատորը այդ մասին տեղեկացնում է Ֆինանսական վարչության պատասխանատու աշխատակցին և տվյալ Բանկին,

4) Բանկը հայտն ուղարկում է Կենտրոնական բանկում տեղակայված «Սի Բի Էյ Նեթ» ցանցի աշխատանքային կայանի միջոցով մինչև Կենտրոնական բանկի կողմից տվյալ գործարքի համար սահմանված կամ հայտերի ընդունման հայտարարված վերջնաժամկետը:

13. Կենտրոնական բանկում տեղակայված «Սի Բի Էյ Նեթ» ցանցի ռեզերվային աշխատանքային կայանից հայտի մուտքագրումն իրականացնում է Բանկի համապատասխան աշխատակիցը: «Սի Բի Էյ Նեթ» ցանցի աշխատանքային կայանը պետք է ապահովի հայտերի մուտքագրումը սահմանված User.id-ից հայտերի ընդունման թույլատրված ժամանակահատվածում:

14. Այն դեպքում, երբ Բանկը հնարավորություն չունի հայտերը մուտքագրել «Սի Բի Էյ Նեթ» ցանցի միջոցով, կարող է հայտերը ներկայացնել Ֆինանսական վարչություն թղթային տարբերակով Կենտրոնական բանկի և Բանկերի միջև կնքված համաձայնագրերի և պայմանագրերի դրույթներին համապատասխան: